«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1032

«12» 08 2022թ.

«ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՇԵՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մկրտչյան.

Համաձայն 2022 թվականի հունիսի 22-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) և «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/7-3-ԵՊԲՀ-13» պայմանագրի՝ Ձեր Ընկերությունը պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

Ըստ պայմանագրի՝ մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի հուլիսի 22-ին: Սույն թվականի հուլիսի 26-ին Ձեզ տրամադրվել է մատակարարման նոր, ողջամիտ ժամկետ՝ մինչև օգոստոսի 04-ը ներառյալ, ինչի մասին Ձեր ընկերությունը պատշաճ ծանուցվել է պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, և գրության բնօրինակը ուղարկվել է հայտով ներկայացված հասցեին: Սակայն Ձեր կազմակերպության կողմից մատարակարում կրկին չի իրականացվել:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/7-3-ԵՊԲՀ-13» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի ամբողջությամբ լուծում է 22.06.2022թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/7-3-ԵՊԲՀ-13» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որաշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Հարգանքով՝

ՌԵԿՏՈՐ Ա. Ա. ԵՊԻՐԱԴՅԱՆ